

ԲԱԺԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՆԵՐԻՆ

Պուշկարիոյ համար
Տարեկան 12 ձր.
Վեցամսեայ 6 »

Ար սասանեանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 ճրլ.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ

Մանուգրեան տպարան
Երևանի համար 40 ասեթիլ
Կ. իսկ վերջին երեսի համար 20 ասեթիլ Կ. երեքին ասեթիլ անգլաներու համար 20 Օլո գեղջ կրկայ :

Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԷ ՀՐԱՏԱՆԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՆԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ դրկել
Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

Կրթութեան նախարար

Արսասանեանի համար ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)

ԶԵՂԶԵՆՔ ԲԱՅՑ ՈՉ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Տնտեսական տագնապոր քանի մը տարիէ ի վեր կը նեղէ Պուլկարիոյ առեւտրական հրապարակը, իր վատ ազդեցութիւնը ունեցած է նաեւ հայերուս վրայ ալ :

Անուրանալի է որ, այսօր Պուլկարիոյ բնակող ամէն հայ, ըլլայ վաճառական կամ արհեստագործ, ըլլայ բարեկեցիկ կամ չքաւոր տիրոջ անգործութեան, անշարժութեան հետեւանքով, աւելի կամ նուազ չափով ունի իր մըտմտութիւնը, իր բազմապատկուած հոգեբարձ : Եւ այդ տագնապին մէջ բուրբոսին չի կործանելու, չի փճանալու համար ստիպուած է հաւասարակշիւ իր ելելուտը, մաս մը բան զեղչելով իր ծախքերէն :

Բայց այս գովելի խնայասիրութեան մէջ ո՞ր ծախքերն են որ ամենէն առաջ մեր գործի մարդերուն աչքերուն կը դարնեն, հաճոյքի համար ծախսուած գումարնե՞րը, աւելորդ զբօսանքի, զարգարանքներու համար վատնուած գումարնե՞րը . ո՞ր :

Որքան ալ նեղ ըլլայ հրապարակը, որքան ալ քիչցած ըլլան գործերն ու շահերը, հայ մարդը կը շարունակէ իր սովորական գիւղագնացութիւնը, իր մեծածախ հարսնիքը կամ ասնախրմութիւնը, իր օրական տուրքը օղիին կամ պիրային : Եւ եթէ նեղութիւնը դրամական ազնուպէր այնքան աճի որ անհրաժեշտ ըլլայ անպատճառ սեղմել ծախքերու ցուցակը, մաս մը բան զեղչել ելքէն, գործի մարդը անմիջապէս կը յարձակի այն տուրքերուն վրայ ուր նշանակուած են ազգային կամ բնակչական փճարքներն ու տուրքերը :

Խօսքս մասնաւոր գասակարգի մը վրայ չէ, որովհետեւ ազգային, հաւաքական գործերու մէջ, ինչպէս հարուստին ոսկին, նմանապէս ազգատին սանդիմներն ալ իրենց տեղն ու կարեւորու-

թիւնն ունին. և երկրորդ այս անգործ վերաբերութիւնը զէպի ազգային կամ բնակչական պարտքերը, գրեթէ ամենուն կողմէն կարտայայտուի անխափր :

Առնենք օրինակի համար մեր զարոյցները : Պուլկարիոյ հայ անհատական կամ ազգային տուներու և հաստատութեանց մէջ ոչինչ այնքան աւերուած է վերջին տարուանս մէջ քան ազգային կրթարանները :

Գրեթէ բոլոր հայ վարժարաններն ալ այս տարի նուազեցուցած են իրենց ծախքերը, կիսած են իրենց պիտոսները : պատճառ, որովհետեւ գործ չկայ, ժողովուրդը նեղն է :

Եթէ իրենք, մեր ազգային կրթարանները, աչքի զարնելու չափ չափազանց կամ գոնէ գոհացուցիչ պիտոսէ մը ունեցած ըլլային, և կամ ժողովուրդը իրաւամբ նեղուած ըլլար ազգային տուրքին կամ զարոյցական թոշակներու ծանրութեան տակ, մինչև աստիճան մը իրաւունք պիտի ունենային քիչ մը այդ ծանրութեան զմեղ թեթեւցեցնելու աշխատելով : Բայց որ ոչ յայտնի չէ թէ մեր վաւակներու գաստիարակութեան համար ծախսած գումարնիս շատ համեմատ բան մըն է, և ատոր համար, մեր քսակէն վճարած դրամներն ալ անզգալի ըլլալու չափ շատ թեթեւ բան մըն են և եթէ իրօք նախընթաց տարւոյն մէջ զարոյցը բաց մը թողած է, ան ալ տնտեսական տագնապին հետեւանքով չէ, այլ որովհետեւ կարգ մը մարդիկ նեղը ձգելու համար թաղ. Խորհուրդը կամ Հոգարարձութիւնը, գիտմամբ չեն վճարած իրենց պարտքերը :

Եւ ցաւալի է տեսնել որ խելացի, զարգացած մարդիկ ալ անտեսելով այդ բացայայտ ճշմարտութիւնները, փոխանա՞ ուղղակի շարիքը դարձանելու, ժողովուրդը կը գտնեն իր անպարտաճանաչութեան մէջ, զարոյցական ծախսերը նուազեցնելով, տուրքերը, թոշակները քիչցնելով :

Այս դժբաղդ երեւոյթը որ գրեթէ բոլոր հայաշատ կէտերու

մէջ գոյութիւն ունի, կարելի է միայն բացատրել անով որ հաւանակ զմեզ ազգասէր, գարոցասէր, մեծ մեծ ամականներով օժտելուս, դեռ մեր զարոցը, մեր վաւակներու կրթութեան գործը, մեր տանը, մեր խանութիւն կիսուն չափ մեր մտածմունքին ու հոգածութեան առարկայ եղած չէ :

Երբ անգործութիւնը ու շահերու նուազութիւնը պատճառ չըլլար որ մեր վայելքներէն չի զրկուինք, ինչո՞ւ անպատճառ զարոյց անիրաւունք : Երբ մեր զաւակին հացը չենք խնայել, ի՞նչ անհեթեթ մտածում կը մղէ զմեզ կիսել անոր ջամբուած մասերը անունդը :

Եթէ տարիները իրօք նեղ են, եթէ գործերը գէշ կերթան, և մեր ունեցած շահը, վարձքը չի բաւեր մեր բոլոր ծախքերը գոցելու, զեղչենք մեր տունի ծախքերէն, զեղչենք մեր քէյլին զարգարանքին համար ըրած ծախքերէն, բայց բնաւ զարոցէն, որովհետեւ արդէն անոնք զեղչուած են :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ԶՄԻՐ, 8 Սեպտեմբեր

Ինչպէս բոլոր Խուրքիա՝ Զմիւռնիան ալ իր ջերմագին հաւաստիքը յայտնել չի զլացաւ վասն յորեւանի վեհ. Գաղանին : Գաղաքին մէջ ամէն տեղ լուսավառութիւններ, լուսավարչութիւններ հրաձգութիւններ անպակաս էին, բոլոր պաշտօնական, կէս պաշտօնական մարմիններու երեսները կեղծ ու անկեղծ ժպիտներով լի էին : Երբ օր մը կը տիրէր ամէն կողմ ու այդ ամէնը արիւնիկակ վագրին յորեւանին համար կը ձօնուէր :

Օտար գետպաններ իրենց պաշտօնական զգեստներով կը փութային կուսակալին քով շնորհաւորական մաղթանքներ թափելու յոռո բռնակալ գահակալին, և

արեւշատութեան փառաբանութիւններ կարգալ արիւնթաթախ վեհապետի հասցէին : Ասոնց կը հետեւէին ծովածոցի մէջ գտնուող օտար նաւերը որոնք լուսավառութիւններով և անթիւ լուսատու լապտերներով իրենց խնդակցութիւնը կարտայայտէին : Երա՛նի, հաղար երանի այդ վեհապետին որ արեւան զոհերով կը տօնէ իր յորեւանը :

Ասոնցմէ վար չի մնացին բոլոր հայ, յոյն, և հրէայ ազգային պաշտօնէութիւնները, Գաղանաբարոյ վեհապետին երկաթակեացութեանը գովաբանական ուղերձներ կարգալու մէջ : Իր պարոցի սաներ մեծ ու փոքր գաստատուացառաջնորդութեամբ գացին իրենց «չօք ետաշանները շարելու, և գովաբանական ուղերձներ պոռչտալու այն պօզալի անձին համար որ գահակալութենէն մինչև այսօր անխնայ հալածած է հայ և թուրք անմեղ ժողովուրդը ջարդելով, բանտարկելով, քանդելով, յափշտակելով, ամէն հանդիպածը, և արորանքի մէջ հազարաւոր կտրիճներու կեանքը ընդունայն խամբեցնելով : Ու այս ամէնը կատարուեցաւ ու կը կատարուի դեռ ժիւ լուսաւորեալ դարուն մէջ, ամբողջ աշխարհի աչքին առջեւ :

Ո՞վ մարդկային կատակերգութիւն. արդեօք կարելի՞ է մոռնալ այդ շարաբաստիկ բռնակալին զգուշ յիշատակը, որ մեր ամէնուն սրտին մէջ արիւնաթաթախ գրիչով արձանագրած է վրէժի անունը : Որ մը չէ օր մը, այն արիւնները բարձրագոյ վրէժ պիտի պահանջեն մարդախոշոջ Սուլթանէն և արժանաւոր հասուցում՝ Երոպայի թագաւոր վեհապետներէն, որոնք լուս ու մունչ կոխկրտեցին հազարաւոր անմեղներու դիակները, քաջախիբը զօրավիգ կանգնելով Մեծ Մարգասպանին : Զի կայ հպատակ մը որ սրտին կսկիծէն չանիծէ հաւաքանօք այս վայրագ վեհապետի շարաշուք ծնունդը :

Խուճը մը սողուններ միայն, շահու, պատուի և փառքի աւարդ թեկնածուներ, ամէն ջանք

ու ճիգ կը թափէին, իրենց կեղծաւորութեան ու չորոքորթութեան բոլոր պաշարը շալթորէն կը մտնէին, որպէս զի գաղանթին պաշտօնեաներուն աչքին զարնեն, ու իրենց մասին բարեխօսութիւններ կատարուին:

Աւայս բոլոր ստորնութիւններուն գլուխ գործոցը եղաւ այն աշտարակը զոր յորեւանի ստաշին օրը հիմնարկեցին անզոյս զօրանոցի բակին մէջ, և որուն ճակատը զետեղուած է քաղաքային ժամացոյց մը, ի յիշատակ այս 25ամեակին: Մի վարանիք հարցնել թէ ո՞վ կանգնեց այդ յիշատակը: Մեր տեղացի ջոլ ալ-գայիները, որոնք բարեգործական նպատակներու համար իրենց լուսնները կը խնայեն, բայց ազգակործան վեհագետի արիւնայեց յորեւանին ի յիշատակ արձան մը կանգնելու գործին ամէն ջանք ու ոսկիներ անխնայ և առատօրէն կը շնային: «Վա՛յ քեզ, Երուսաղէմ, զի թագաւորդ մանուկ է: Վա՛յ այն ազգին ուրուն անհատները արիւնարբու գազանին բազուկը կը հասցնեն իր դերը լաւ խաղալու համար: Ան որ լսելու ականջ ունի թող լսէ:

Սա ալ կարելի չէ առանց յիշելու անցնելու Ամսոյս ծին տեղւոյս հայաբնակ թաղի մէջ հըր-գեհ մը ծագեցաւ, երեք խանութ, և երկու տուն հոյ ճարակ դարձան, որոնց մէջ էր բերեցակ Կ. ի խանութը որ ամբողջովին մոխիր գարձաւ: Ինչո՞ք 7 զաւակներով մէկտեղ ծալապատիկ և աւուր հացի կարօտ մնաց: Քանի մը ետանդուն երիտասարդներ հանգանակութիւն մը բացին փոքր գրամագլուխ մը հայթայթելով խեղճ արկածեային գէթ օրապահիկը ապահովելու և զայն քաջալերելու ջանքով: Այն

ջոլերը ու մեծ վաճառականները որոնք աշտարակի շինութեան համար 10 — 20 — 30 ոսկիներ վճարած էին սիրով ու յօժարութեամբ, այս հայը մահէն փրկելու համար իրենց 40 փարան անգամ խնայեցին, և ոմանք ալ վաճառեցին հաւաքիչները «մեր պիտոճէն չի ներեր, մենք մեր ազգաները ունինք» պօռալով: Աստուք հայ անունով ծածկուած կատարեալ դաւաճաններ են, և ազգին ամենէն ազտօտ դասակարգը կը ներայացնեն: Ամօթ իրենց: ԳԱՅԼ, Իզմիր, 8 Սեպտ.

ԱՌՈՒ ԿՏԱԿԸ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏԵՐՈՒԹՅԱՆ ՄԸ)

Պարզեալ վարդապետն էր: Տիգրիկի շրջակայ Ն. գիւղը գտնուելով տեսարան մը կրնար հայացնել մարդկային գաղանթի կեան ու՛րաւորութեան: Չափաքան ամ լուսամտաներով, խորտակուած գոնիքով, քանդուած կիտաւեր տուներէն միտացող հրդեհի ծուխը կը քարծրանար մթնալորտին մէջ ուր քամի և հալածուած կուզար ծածկելու դիտողին աչքին հրէշային անխղճութեան այս կատաղի մերկացուցաւ: Երկաթի պղնձի կտորուանքներով, քարի ու աղի սիզեզներով խճորուած փողոցներու մէջ, իւրաքանչիւր քայլափոխիկ կը հանդիպէր տրեան անբնական հեռքելու, մարդկային մարմին փեկոտներու, զորս չի կորկրտելու համար ստիպուած էր ամենամեծ խնամքով հետեւի քայլափոխներով և ճնճողի փութկոտութեամբ ցատկոտանք արիւնազանգ գանկերու վրայէն: Հոն ուր զեռ քանի մը ժամ առաջ անգործ ու խաղաղ երանութիւնը կը արեւը գեղջուկ հողագործին բնակարանին մէջ հիմայ ամայս թիւնը արտօր ու մեծ մահր իրենց չարաչոք թևերը բացած փռած էին: Թշուտութեան ու ցաւի յաղթանակը գոյժով զօրացող հայ ազգին:

Չառաղէմ ազգաներու ահագին բանակ մը վարագործն յարձակելով աւերակներուն վրայ, քայքայուած, որդնոտած գիւղերը անյագութար կը բզկտէր: Անգին, փայտակներու կոյտի մը քով, հնամաշ կարկտան շաղկապներով, փաթառացուող հրէշատիպ ճիւղեր, երկաթի ձողերով զինուած իրենց գիւղական նայուածքը զարուբելիօրէն տարուբերով աւերակներուն վրայ: Կը փորէին, կը պեղէին զեռ երկկուան հրդեհէն իսանձող հրատապ մոխիրները: Չաես, ծակաշք յափշտակիչներու անկուշտ գոռու գոռուքը, որ մթնալորտը կը թնդացնէր ամէն անգամ՝ երբ մոխիրներու տակէն բան մը դուրս կուգար զոհերու մնացորդ կան ու կայքէն: Խառնուելով գիւղական լճուշուններուն մահանուագ համերգին, զիւրային խմբերգ մը կը յօրինէր գիւղական վրայ պար ոտնոց արիւնուշադ հասնողներու: Ամբողջ գիւղը ջարդուած էր: Դերուանի գիւղագետ Աւօն միայն կար այս բիրտ նախճիւրէն պատահական բացակայութեան մը շնորհիւ ողջ մնացած:

Հինաւուրց կեռասներին ստորաք, կիսաքանդ պատերու փայտակներ քով, կանգնած էր գիւղագետ Աւօն ցաւերով ծանրացած ճակատը դէպի գետին խոնարհած և իր թախտայից երեսը ծածկած երկու ձեռքերուն մէջ: Ետագուն աչքերէն անդադար վազող արցունքի կաթիլները կը թանային իր գիւղի սփռուած թևած ձեռքերը, առանց ամենազոյզն սփոփանք մը իսկ պատճառելու հէք Աւօն: Արցունքը վիշտին մէջ, անձրեւին կը նմանի որ անապատը կը տեղայ:

Իր երբեմնի բնակարանին աւերակներուն առջեւն էր կեցած: Կոտորածին անջ վայրկեանը իր բոլոր արհաւիրքով մտքին մէջ կը պատկերանար: Ի՞նչ աղիողորմ տեսարան մը պարզուած բլլալու էր այն պահուն, երբ գազան քիւրսերը իր օտն վրայ յարձակել սկսած էին: Կը սարստար Աւօն երբ կը խորհէր թէ իր տղան գոնէ քիւրս մը չէ կրցած սպաննել, վրէժի զրացուած կատաղութեն կը հրդեհէր իր ձեռքերը ստիպող: որ վիշտով ու կսկիծով լեցուած էր համակ: Կը մտաբերէր իսկոյն դաշտին մը գտնել, երթալ նետուիլ մօտակայ քրդական գիւղին բնակիչներն

րուն մէջ, զարնել, կոտորել անխնայ ո՞վ որ հանդիպէր, կին թէ աղայ, ու իր ձեռքով թափած արիւնի լճին մէջ լողանալ հալածական վազրի պէս, որ իր թշնամի որսորդները յօշոտելէ ետքը, անոնց արիւնով կը զովանայ: Գլուխը շուտ եկաւ, ձեռքերը վերցոյց և քայլ մը առաւ մեքենաբար փայտակներուն մէջ:

Յանկարծ երկաթի ձեռքեր պինդ բռնեցին Աւօնի բազուկները: «Ի՞նչ կը փնտեսես հոս», որոտաց թիւրքատանապետ վարագետ թեալը: Աւօն հիասթափ եղած էր, մէկ վայրկեանի մէջ աչքին տոջեւ եկան սպանման այն բոլոր ճիւղային միջոցները զորս մարդկային հրէշութիւնը կարողացած է յաւնայ: Ազատուած չի կար այլևս, ու իր գաւազաններուն պէս, ինքն ալ անօգուտ զոհ մը պիտի ըլլար: Այն ո՞վ պիտի լուծէր Աւօնը անտախտի փրկելը:

Յուսահատ, ուշաթափ ինկաւ գործերու թեւերուն մէջ, որոնք խեղճ վեր առին գայն, ձեռքերէն, ոտքերէն քաշկոտելով, անշնչացած գիւղի մը պէս, սկսան փողոցներէն քարոտայ միջոցները որ հասան Տիգրիկ, ուր Աւօն բանտ արուեստ իւրկոյն:

Բանալը ի էր իրեն պէս բանտարկեալներու անհամար խառն խճորանձով: Ամէնքն ալ իրենց բնասանիքէն քանի մը հողի գոն տուած էին, ու մէնքուն տունը տեղը քարոտաքանդ եղած էր, և յետոյ բանտ տարուած էին իբր Յեղափոխական: Մարդկային թշուտութեան ու կսկիծներուն բոլոր երանգներուն համայնապատկեր մըն էր կարծես, որ կը ներկայանար իսկոյն բանտին գոնէն ներս մանողին: Յամ ու խոնար, մութ ու քարայհատ զետնայարկ մը բանտ ըստաճը: Աղտոն, աղբէն լեցած պատերէն չիթ չիթ կը կաթկթէր ջուրը, կը բաւէր քանի մը շարժմիայն մնալ այդ որջին մէջ քառասուն տարուան ձերանալու համար: Տխուր հառաչքներ, ինչզուկ, յուսահատ հեծկտանքներ միայն կը լսուէին: Թէև 150էն աւելի բանտարկուածներ լեցուած էին: Դեռ կէս օրուան երկու ժամ կար, ու յետոյէն աւելի մարդիկ հոն բերուած էին: Երբ Աւօն ընդհին, ոչ ոք ուշադրութիւն չի պարձուց նորիկին, այնքան սովորական դարձած էր այլևս իրենց համար: ՉԱՐՈՒՅԻ

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԸ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻ

Մուս նասինք շիտակ խօսինք, մեր թերութիւնները բնաւ չի ծածկենք եթէ օգտակար ըլլալ է նպատակներս: Մեր մէջ կը թական գործը այնքան թերի կողմեր, մեր ուսուցիչները այնքան պակասներ ունին որ՝ մարդ չի կրնար մանկավարժական ո՞ր և է հարցի մասին խօսել կամ գրել առանց մեր վարժարաններու անուղղակի քննադատը հանդիսանալու: Երբ գուրտէ գուրս մարդիկ շատ անգամ մեր մանուկներու ապագայի մասին մտահոգ ըլլալ կեղծելով կը թական խնդիրները կը խառնուին միայն իրենց ազտօտ հաշիւները մաքրելու համար, և ուսուցիչներու կը վերադրեն ճիշդ անոնց չունեցած թերութիւնները, լաւ է որ մենք մեր մէջ խոստովանինք մեր պակասները և գործնք շտկելու աչ-

խտինք որպէս զի օրին մէկն ալ իրաւացի քննադատութեան չարժանանանք: Կրթական տեսչներէ զուրկ ենք, ուսուցչական ժողովները միայն անուանական գոյութիւն մը ունին, իսկ անօրէն գասատուները (ա՛խ այդ մէկ անձէ բազկացեալ ուսուցիչ անօրէնութիւնները) իրենք անօրինութեալ, առաջնորդուելու պէտք ունին: Ո՞վ պիտի ուրեմն մեր թերութիւնները մատնանիչ ընէ, մեր պակասները յիշեցնէ, Գործին օտար կողմ, մեզ չի ճանչցող մարդիկ չեն կրնար այդ պաշտօնը կատարել, և թէ նոյնիսկ անոնք մեր կրթական խնդիրներով զբաղուելու համար ո՞ր և է անձնական կիրք յաղեցնելու և հաշիւ մաքրելու անորակելի շարժանիքներէ զերծ լով օգտակար հանգիստանալու զգացումով գործեն: Մեզ, ուսուցիչներուս կիցնայ բարեկամօրէն և անկեղծաբար մէկզմէկու թերութիւնները յիշեցնել, զերբար քննադատել յանուն մանուկներու օգտին: Ուրեմն մեր ուսուցչական ժողովները թող մէկմէկ ատեաններ ըլլան մանկավարժական թէ գործնական և թէ տեսական հարցերը ախտի քննիչներ, ուսուցիչներու թերութիւն-

ներն ու ստաւելութիւնները յոյց տրուին: Թող մեր մամուլն ալ ամէն տեղի ուսուցչներն ու ուսուցչական ժողովներն իրարու հետ յարաբերութեան զնէ, թող արձագանգն ըլլայ այդ ժողովներու մէջ տրուած որոշու միտքը, յայտնուած կարծիքներու, և ալ զպէս, գաղափարաց լաղխուածն պիտի ծագի լոյսը, մեր դատարարականը պիտի կրնան մէկզմէկ ճանչնալ, մէկզմէկու գործի և ուղղութեան մասին տեղեկութիւն ունենալ, իրարմով լուսարանուիլ, զտրգանալ և կատարելագործուիլ: Ես մտածուեցի թող է որ մտադրած եմ ատեն ատեն մեր թերութիւններու մասին գրել, մեր պակասները մտանալի ընել և գործնք պաշտօնակիցներուս ուշադրութեան և խորհրդածութեան առարկայ դարձնել:

Տղոց ժամանակը խելացի և արդիւնաւոր կերպով գործածել մեծ վարպետութիւն մըն է, որով մեր ուսուցիչներէն խիստ քիչերը օժտուած են: Շատեր այդ մասին չեն խորհիր իսկ և կը կարծեն թէ աւելի կամ

նուազ խելացութեամբ պատրաստուած ժամանակացոյցի մը համեմատ գասախօսելով անպարտաւելի կրնան սեղանիլ: Եւ սակայն գրեթէ առանց բացատրանալու մեր նախակրթարաններու մէջ աշակերտներու ուսման յատկացուած ժամանակը ապագային կերպով կը վառնուի: Կը սպաննուի և այդ բազմաթիւ պատճառներով: Առ այժմ պիտի բաւականանամ անոնցմէ մի քանին յիշելով:

1. արժարա՛ի մը չէնք որչափ որ աշակերտները միշտ առողջ ու զուարթ և բարեկարգ վիճակի մէջ պահելու ու խառնութեան տրամադիր ընելու յարմար պէտք է ըլլայ: մեր նախակրթարաններու չէնքերը իրենց կանաւորուած այնքան նպատաւոր է միայն զանոնք անբարեկարգ վիճակի մէջ պահելու, խամրեցնելու, թուլանալու, տիրեցնելու, և հետաւարաբար ամէն ճգի, ուշադրութեան և աշխատութեան անընդունակ դարձնելու, որով աշակերտները ակամայ կը կորսնցնեն իրենց ժամանակը:

2. Ուսուցիչներէ շատերը գաստան մտնելէ առաջ ոչ պէտք եղած առարկաները և ոչ ալ իրենց գասախօսել կը պատրաստեն, որով աշա-

Տ Ե Ղ Ե Կ Ա Բ Ե Ր

Սօֆիայի Թաղ. խորհուրդը կը գրէ մեզ .

«Տեղադրութեան մէջ գրուեցաւ թէ հրատարակուող վարձու հիւն ամսականները խորհուրդս չի վճարեր :

«Իրդի Թաղ. խորհուրդը իր նախորդէն դեռ հաշիւ առած չըլլալով չէր կրնար վարձու հիւն խնդիրը կարգադրել , և սակայն այս վերջինին գիտութիւն վրայ խորհուրդս առ հաշիւ 100 ֆրանք վճարեց , նկատի ունենալով անոր անձուկ վիճակը : Յաւայի է ըսել որ նախկին Թաղ. խորհուրդը դեռ մինչեւ այսօր հաշիւները չէ յանձնած մեզ , հետեւտար օրիորդին անվճար մնացած ամսականներուն պատախանսուն ինքն է :

«Ղ. աւելի ցաւալին այն է որ , կը գրէ Թաղ. խորհուրդը , նախկին մարմինը առջի վարձու հիւն դրամներն ալ վճարած չըլլալուն այսօր ստիպուած ենք երկու վարձու հիւններու անպատուարեր դատերովը ժամավաճառ ըլլալ և հասարակութեան առջեւ ալ վարկաբեկ ըլլալով մեծամեծ դժուարութեանց բաղխիլ նոր ու բանդէտ պաշտօնեայ մը գտնելու համար :

Ֆիլիպէէն կը գրեն .

«Նահրիման — Աղամեանի ծանօթ երկու դատերը տեսնուեցան վերաքննիչ ատենին առջեւ : Շահրիման երկու դատին մէջ ալ բացարձակապէս անպարտ արձակուեցաւ : Հակառակորդները , որոնց կողմէ լարուած գաւ մըն էր լոկ ասիկա վարձարանին ուսուցիչները անուանարկելու համար , բոլորովին վարկաբեկեղան այս անգամ :

Յայտնի է Պարտուածի ընթերցողներուն թէ Աղամեան երկու դատ բացած էր Շահրիմանի գէտ . մին իբր թէ իր աղան ծանրապէս քանակոծած ըլլալուն համար , միւսն ալ , Հոգարտուածութեան մոզովին մէջ զինքը «ցած» ու «զրպարտիչ» անուանած ըլլալուն համար : Արդէն այս վերջին դատին մէջ նախադատ ատենը բոլորովին անմեղ հռչակած էր Շահրիմանը , որովհետեւ ամենապատուաւոր ու յայտնի վկաներով ստուգուած էր թէ ի՞նչ պարագաներու մէջ Աղամեան «ցած» ու «զրպարտիչ» կոչուած էր : Իսկ առաջին դատին մէջ նախադատ ատենը 106 ֆր. տուգանքի դատապարտած էր Շահրիմանը , նկատելով որ ծեծի պատիժը օրէնքին մէջ արգիւտուած է :

Սակայն ուրախ ենք այս անգամ իմանալով որ վերաքննիչ ատենը վկաներու յայտնութեանց լուրջ քննութենէն ետք , հասկցած է թէ , իսկապէս իբրեւ պատիժ երբեք ծեծ տրուած չէ տղուն , և թէ բոլորովին բացառիկ պարագայ մը միայն եղած է այդ պատախանսած աշակերտին գէպքը :

ԻԶԶԻՐ-ՖՈՒՍԻ ԲԱՅ ԴԱՄԱԿՐ ՍՈՒԼՔԱՆԻ ՈՒՂՂՈՒԱՑ

Մտկադիր հեռագիրներուս , նամակներուս և արգարացի բողոքներուս պատասխան մը չի կրնալով ստանալ , ճարահատեալ սովորական միջոցներու կը դիմեմ , յուսահատ լուծիւնը խղելու համար :

Վեհափառ տէ՛ր , անարգալուծ ենէ ճնշուելով , օրինաց պաշտպանութենէն զրկուելով , և մօրս

«կեպուր»ի մը հետ ամուսնութեան պատճառաւ , բոլոր ունեցած ստացուած քննիչս կողոպտուելով թշուառացայ :

Տեղեկագրի մը մէջ հայերու կտորածներուն պատրաստութիւնը նախասեսիլ և նշուակելի համարձակելուս համար Հալէպ արքայութեանցայ , Հալէպի մէջ , «խաֆիյէ»ներու տուած անդեկագիրներուն պատճառաւ , սուսս զօրքերէ պաշարուեցաւ և 15 օր կանոնաւոր պաշարման ենթարկուեցայ կնոջ և սարսափահար աշակերտներուս հետ : Կ. Պոլիս վերագարձիս մաքսատունը բոլոր գոյքերս գրուեց , որոնց հետ նաև , իբր վիսաակար «Տարսուկոնցի Տարտաբէն»ին թարգմանութիւնը , մինչդեռ անոր վաճառու մը շատ արդիւնաւոր պիտի ըլլար : Անկէ ի վեր , Սպանիոյ մէջ , թողակիս վճարման համար միշտ հակառակութեան մէջ կը գտնուիմ ձեր երկամտից նախարարին հետ : Պաշտօնեաներս , վեց ամսէ ի վեր , իրենց թոշակը չկրնալով ստանալ , անթուծութենէ մեռնելու աստիճան տկարացած են : Դեսպանատունը ոչորմելի վիճակի մէջ է , պարտատէրները դուռը ափ տուած են :

Մատրիտի «կարբուստ»ի գործակալութիւնը ամէն օր , 11 ամիսէ ի վեր մնած նախորդիս դեռ չի վճարուած յուղարկուութեան ծախքերը կը պահանջէ : Ի զուր «կարբուստ»ի կը խոստանամ թէ իմիններուս հետ միասին պիտի վճարուի , և կըսպասենք միայն . . . բայց այլ եւս չուզեր ինձ հաւատալ :

Այս վիճակին մէջ , Վեհափառ Տէր , փոխանակ զիս տանջելու , որովհետեւ նոր տեղեկագիր մը եւս կուգամ ներկայացնել միամիտ եւրոպայի կողմէ սպասուած անհրաժեշտ բարենորոգմանց և

մայրաքաղաքին պաշտպանութեան ապօրինի անհոգութեան մասին . նոյնպէս նաեւ զինուորական բարեկարգութեանց վրայ հիմնուելով նորերս հրատարակուած «կարբուստ» պատեհութիւնք» գրքիս , — այո՛ վեհափառ , այս ամէն պատճառներուն համար զիս տանջելու տեղ , աւելի լաւ է հաշիւս կարգադրէք :

Վեհափառ , ինձմէ յափշտակուած ստացուած քննիչս , յանուն օրինաց և արգարութեան , ինձ ետ դարձնել տուէք , և հաճեցէք , 30 տարուան ժառանգութենէ , ձեր վեհափառութեան համար կատարած մէկ մենամարտէս և երկու ճակատամարտներէն ետքը , հանգստեան կոչել զիս :

Արդարութիւն պիտի ըլլայ այս , որովհետեւ , մինչդեռ հինգ տարուան արքայութեան եւ տառապանքէ ետք , զոր ստիպուեցայ համբերութեամբ կրել , երբ փոխարինութիւն մը կը յուսայի գրանել հոս , ընդհակառակը բոլորովին յուսախաբ եղայ :

Եթէ ձեր լուծիւնը տեւէ , Վեհ. Տէր , և այս տասներորդ հեռագիրը եւս ձեզ շրջապատողներու մեքենայութեանց պատճառաւ անհետեւանք մնայ , ձեր կայսերական վեհափառութեան «ֆոսմ» և «թառատ» ծանօթութեան պիտի ներկայացնեմ զայն , համազգային գործակալութեանց և լրագիրներու միջնորդութեամբ :

Եւ եթէ ձեր վեհափառութեան «հանրածանօթ» արգարագատութիւնը իր կենարար և բարեգութ ճովանաւորութեամբ պիտի պաշտպանէ զիս , կը խնդրեմ իմ պաշտօնս իբր լրացած նկատելով Մատրիտի մէջ , վերագարձիս թուղթերը ուղարկել տալ հաճեցէք :

Ձեր կայսերական մեծութեան ամենէ անձնուէր և խոնարհ հպատակը ,

Կիսաբաժնի հրամանատար Իզզիբ-Ֆուսի - Դեսպան Մատրիտի Թարգմ. ՅԻՍէ

կերտներուն ժամավաճառ ըլլալուն ուղղակի պատճառ կը հանդիսանան :

3. Ընդհանրապէս մեր վարձարաններու մէջ աշակերտները լաւ չեն դաստարարելու իրենց կարողութեան եւ ընդունակութեան համեմատ , որով ուսուցիչները կը ստիպուին չի սորվուած դասերը կրկնել եւ ժամանակ կորսնցնել :

4. Մրագրի . յոռի կազմութեան , ուսուցչին անմէթոս , անթակթ կամ անհասկնալի ըլլալուն եւ ուրիշ բազմաթիւ պատճառներով ուսումը դասարանի մը աշակերտներուն մեծամասնութեան հասկացողութեան համեմատ չի տրուիր , որով աշակերտներէ շատեր չեն կրնար օգտուիլ իրենց յամ գտնախօսութիւններէն եւ ի զուր ժամանակ կը կորսնցնեն :

5. Ուսուցիչներէ շատեր իրենց դասախօսած ճիւղի մասին իւրաքանչիւր կարգի համար առանձին ծրագիր չունենալով , կամ ունեցածնուն համեմատ չի դասախօսելով եւ կամ մասնաւոր ճիւղերու , ի վիսա ուրիշ ուսուցիչներու , չափէն աւելի կարեւորութիւն տալով աշակերտներուն ժամանակը անհաշիւ կերպով կը վատնեն :

6 Մեր վարձարաններու մէջ գրաւուր պարտականութիւններու եւ յարմար գասագրքեր եղած ատենն իսկ գրաւոր դասերու չափազանցութիւնը աշակերտներէն աւելորդ շատ ժամանակ կը խլէ , և այդ անօգուտ տեղը , որովհետեւ ուսուցիչներ գիտեմ որոնք գոյութիւն ունեցող կանոնաւոր դասագրքերուն չհաւնելով , երբ ուզած են գրաւոր ընել իրենց դասերը շատ անհեթեթի բաներ ընդօրինակել տուած են տղոց :

7. Անշուշտ միամիտները չլացնելու համար մեր մէջ կան վարձարան պահողներ որոնք չեն խղճար իրենց 7-13 տարեկան տղոց սովորական ուսումնեւէն զատ միանգամայն չորս լեզու , ազգագրային կարեւորութիւն ունեւալի արուեստ մը , գաշնակ , իւղաներկ , գծագրութիւն և այլն եւ այլն սորվեցնելու յաւակնիլ :

Սյդ պոստախօսները մասնաւոր նպատակներով վարձարան բացող աճպարարներու դասակարգին կը պատկանին բարեբաղդաբար , որովհետեւ անոնք միայն այդ տեսակ յիֆշուլի պէտք ունին , եւ այդ ամէն բան խոստացողներն են որ ոչինչ չեն տար եւ իրենց յանձնուած տղոց ժա-

մանակը միայն կը սպաննեն :

8. Մեր ուսուցիչներէն շատերը կրնամ ըսել քիչ լացատրութեամբ ամէնքն ալ իրենց դասախօսութեան մասն ծրագիրը չեն ընդլայնել , իրենց տրամադրուած ժամանակին համեմատ դասերու չեն բաժնել , որով կը ստիպուին ըստ բաղդի երբեմն չափազանց նիւթ պարունակող և մէկ անգամով անմարսելի , երբեմն ալ խիստ վտիտ եւ անկօրեւոր դասեր աւանդել : Եւ այս երկու պարագային ալ աշակերտներուն ժամանակը անխելք կերպով կը գործածեն :

9. Շատ ուսուցիչներ իրենց դասարանի տղոց շատութեան , բայց սաւազ իրենց ապեկարութեան , անկարողութեան պատճառաւ աշակերտները բարեկարգ վիճակի մէջ չեն կրնար պահել , որով անոնք իր դասախօսութիւններէն չեն կրնար օգտուիլ եւ ժամանակը ի զուր կը վատնուի :

Եթէ ընթերցողները ձանձրացնել չի վախնայի կրնայի զեռ շատ երկարել թուագրութիւնը այն պատճառներու որոնց-ով մեր նախակրթարաններուն մէջ աշակերտներուն ժամանակին մեծ մասը ի զուր կը սպառի , կը

սպաննուի . սակայն ինչպէս ըսի շատ քիչեր կան այդ մասին խորհող մտածող , կը փափաքէի որ յարգող պաշտօնակիցներս վերոգրեալ նկատողութիւններս իրենց ուշադրութեան առարկայ ընէին եւ զգուշանային ամէն կերպով իրենց աշակերտաց սուղ ժամանակը ի զուր վատնել :

Իրտնանք մենք մեզ տրուած ժամանակը օգտակար , արդիւնաւոր կերպով գործածել , եւ թողուք որ ուսուցիչներու շարունակական փոփոխութեան պատճառաւ աշակերտներու տուած անազին ժամանակին համար պատասխանատու Պատուարժան Հոգարարձութիւնները մնան :

Կ. ՊԻՕՆԵԱՆ

Ֆիլիպէ , 10 Սեպտեմբեր

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Օրմանեան չպատրիարքը անցեալ շաբթու խիստ դիմում մը րրեր է Մեծ Եպարքոսին և ներքին գործոց նախարարին, բոլորը յայտնելով ոստիկանութեան նախարարին ի գործ դրած կամայականութեան դէմ, որ Գում-Գարուի մալ խորհուրդին սովորական նիստը դադարեցնել տուած էր ամենայն շին պատրուակով մը:

Պատրիարքը յայտարարել է թէ եթէ գործերը այսպէս շարունակուին, ինք պիտի ստիպուի պատրիարքարանը փակել: Պատրիարքը միանգամայն կրկնել է նաեւ իր բողոքները բազմաթիւ անմեղներու ձերբակալութեանց մասին:

— Եստիքի հայ բնակիչներուն մէջ գաւառնախոսութեան խրատում մը սկսել է տեղի ունենալ: Պատրիարքարանը այս մասին բացատրութիւն պահանջելու փորձակին առաջնորդ փոխանորդ Թաթէոս վարդապետէն: Ասիկայ կը գրէ թէ՛ ազգային վարժարանները անկեպարան վիճակի մէջ են և լատին վարժարանները ձրի ուսում, ձրի դասագիրք, ձրի զգեստ և մինչև իսկ կարօտ աշակերտներուն դրամական նուէրներ ալ տալուն պատճառաւ ժողովուրդը հրապուրուած է, հետեւաբար այս տխուր վիճակին առաջքն առնելուն համար կառավարիչ պատրիարքարանին առ նուազն 150 սակի նպաստ մը յատկացնել յիշեալ վարժարաններուն:

— Դասիւն քաղաքին հակալքողական ընկերութիւնը որոշել է ալքոլի գործածութեան դէմ տետրակներ հրատարակել և ձրիաբար ժողովուրդեան մէջ ցրուել: Տպագրութեան ծախքը հոգալու համար՝ բարեւէր անձերու նիւթական աջակցութեան գիւմեր է:

— Երիգոր Զանչեանցի մահուան քառասունքը նոր առիթ մը եղաւ որ Ռուսաստանի զանազան կողմերը մեծարանքի ցոյցեր ըլլան հանգուցելոյն յիշատակին համար: Մոսկուա ուր թաղուած է Զանչեանց, յատուկ հոգեհանգիստ տեղի ունեցեր է Ս. Խաչ եկեղեցիին մէջ, ի ներկայութեան խուռն բազմութեան: Կիւմանանք որ մտադրութիւն կայ երրորդ անգամ ըլլալով հրատարակելու հանգուցեալին հեղինակութիւնները, որոնց արգելուքը պիտի յատկացուի դարձեալ որբանոցներուն:

Ռաբիւտ հանգուցեալին հեղինակութիւնները, որոնց արգելուքը պիտի յատկացուի դարձեալ որբանոցներուն:

Ուրախութեամբ կատեմենք թէ՛ Ք. օր Զանչեանցի համար հոգեհանգիստ կատարուեցաւ քաղաքիս եկեղեցւոյն մէջ:

— Ստացանք «Ձէյթունի Անցեալին և ներկային» Ա. մասը, պատկերազարդ, վիճնայի տպարանէն լոյս տեսած:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Էրզրումի ուսուսկան հիւպատոսարանի գործակալը և իր քարտուղարը անցեալ շորեքշաբթի օր յարձակում կրեցին քրիտեւէն: Էրզրումէն Երզնկայ գացած ատեն, Հակոբակ ընկերացող թուրք զինուորներուն, զիմագրութիւնը անկարելի եղած է: Երկու թուրք զինուորներ սպաննուեցին, ուսուսկան պաշտօնեաները յաջողեցան խոյս տալ հոն ձգելով իրենց գոյքերը:

— Եստի ամսոյս 17ին Պոլիս հասեր և «Իզլէտտին» շոգեմակոյով նաւահանգիստ մտեր է, ուր թնդանթներով ողջունուեր է: Սուլթանին կողմէ զրկուած մասնաւոր պատուիրակութիւն մը, որ կը բազկանար նաքիր և Խուրխան փաշաներէ, արդէն էտիրնէի առջև գիմաւորած էին զայն, ուր կայարանին մէջ զօրահանգէս մը տեղի ունեցած էր ի պատիւ Եստի: Երբ Պոլիս պիտի մտնէր, Սանսթէֆանօյի առջև թէվֆիզ փոշա և քանի մը կայսերական թիկնապահներ Եստիին ընդ առաջ եկան: Մագրիքէօյի առջև սպասող կայսերական Իզլէտտին շոգեմակոյ կը փոխադրեց Եստի ֕րթաքէօյ ընկերակցութեամբ իշխանազուն Էպտիլ-Գատիրի: Հոն Մեծ-Եպարքոսն ու արարողապետ Պի. Բահնէտտին էֆէնտի Եստիին կը սպասէին, զոր առաջնորդեցին Եստիի պատուաբար, ուր Սուլթանը իր զինուորական հետեւորդներով գիմաւորեց զայն: Անկից Եստի և Սուլթան կառքով Մէրասիմի քէօզկը գացին:

Եոյն իրիկունը ելլալով մէջ լուսավառութիւններ եղան: Տաճիկ թերթերը իրարանցումի մէջ են, և անորակելի մրցումի մը բռնուած են վարնոց պնակալէզուութեան մէջ իրար գերազանցելու համար: Կրտսէ թէ Տաճիկական ու Պարսկական այս միութիւնը պիտի ուրախացնէ բոլոր միւսլիման աշխարհը և խալիֆային տիրապետութիւնը աւելի պիտի ամրացնէ, նոյն ոճով և պարսկերէն լեզուով ոտանաւորներ ամէն օր կերեւան թուրք թերթերու մէջ:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Թիէն-Ձինէն կը հեռագրուի թէ վալտերդէ կոմսը և իր սպայակոյտը հոն հասած է սեպտ. 14ին: Կոմսը ընդունուեր է գաշնակից զօրքերէն կազմուած պատուակալ պահակախումբէ մը: Կայարանը զարգարուած էր գերմանական, ֆրոնսական և ուսուսկան դրօշակներով, միւս ազգերը դրօշակ չէին պարզած:

— Թալի-Նուան-Պուի մէջ պիտի հրատարակուի կայսերական հրովարտակ մը, որով աստիճանաշարի պիտի ըլլան թուան իշխանը, Չուան-Հօ, Քանլի և ստիկանապետ Էն-Նեան իբր Պօքսէրներուն պետերը:

— «Մորնիկ Բօգր» Եանկայէն կը հեռագրեն թէ Կոմս վալտերդէ Թա-Քու հասածին պէս, պիտի ներկայացնէ վերջնագիր մը պահանջելով որ խոսովութեանց հինգ պետերը յանձնուին իրեն:

Եթէ չիւնական կառավարութիւնը գոհացում չիտայ այս պահանջին, պատերազմ պիտի հրատարակուի և Գերմանիա պիտի գրաւէ երկու բերդեր, հաւանականաբար նաեւ չիւնական նաւատորմիդ: Բոլոր տէրութիւնները բացի Անգլիայէն իրենց հաւանութիւնը ցոյց տուած են Գերմանական այս որոշումին:

Սակայն ուրիշ թերթեր կը հերքեն վալտերդէի այդ իմաստով վերջնագիր մը չ'ընկրկայացուցած ըլլալը:

— Իուսիա Մանչուրիան կցած կը յայտարարէ, սակայն միւս տէրութիւնները այս կցումի մասին իրենց կարծիքները չեն յայտնած դեռ և Անգլիական լրագիրները կը սեն թէ այս տեսակ յայտարարութիւն մը չիկայ և միայն Ռուսիայէ պատակ ունի իր զօրքերը Մանչուրիոյ մէջ պահել մինչև որ հոն խաղաղութիւնը վերջնականապէս հաստատուի:

Թ Ր Ա Ն Ա Վ Ա Լ

Լուր կայ թէ՛ Պօթա, 2000 պօէրներու հետ Լէյաստօրի ճամբով կը յառաջանայ, Իիէթէրպուրի մէջ, վօրսթէր հրամանատարին միանալու համար:

— Նիւ-Եօրք Հերալը կը ծանուցանէ թէ՛ Պ. Ք. վանտերպիլտ իսկապէս թագաւորական նուէր մը կը սէ իր աղջկան, Մալպօրուկի դքսուհիին: Անոր զրկած է 500,000 տօլարի չէք մը տօնելու համար իր ամուսնոյն թրանսվալէն ողջամբ վերագործը:

— Լահայէն կը հեռագրուի թէ՛ Կէրտէրլանտ զրահաւորը հաւանականաբար մօտերս կը մեկնի Ատենէն Լօրէնցօ-Մարքէզ Քրիկէրը Եւրոպա տանելու համար: Տիկին Քրիկէրը շատ սկար է և չի պիտի կրնայ տոկալ երկարատեւ ծովային ճամբորդութեան:

այս պատճառաւ ստիպուած է Բրէթօրիա մնալ:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Իտալից, Կ Փ. — Ձեր առած հասցէներուն Հօկտ. 15ն սկսեալ թերթ պիտի գրկուի:

— Պ. քաղաք, Ռ. Մ. — Ձեր ուղած թիւր զրկեցինք: «Օոոո»ի հասցէն կը գտնէք թերթին մէջ: «Շախի» թիւ 15ն կը ստանաք. բաժնեգիրը զրկեցէք:

— Կր խնդրուի նամակագիրներէն ուղարկուի զարձնել իրենց փակցուցած նամակագրոյն վրայ, որոնք շատ անգամ նամակին ծանրութեան չի համապատասխանելուն կը ստիպուինք տուգանք վճարել: Ասկէ ետքը այդ տեսակ նամակները պիտի մերժենք ընդունել:

— Ռ. թը տարեկան մանչ զուակ մը ի հօրէ որր մնացած ըլլալով իր մայրը կը փախաբի զայն որդեակ ազգայինի մը իբր որդեգիր յանձնել օրինական միջոցներով:

Փափաքողները կարող են դիմել խմբագրութեանս:

— Բրովիտէնս, Հայկական գրատուն: — Ստացանք ձեր զրկած բաժնեգիրը:

Ա Ջ Դ

Հոգաբարձութիւնս կը ծանուցանէ թէ ամէն անոնք որոնց աղքատ ըլլալը հաստատուած Լազգային պաշտօնական մարմինն է, և որք կը փափաքին իրենց զուակները ձրիաբար ընդունել տալ ի վարժարան, թող փութան վաղը, կիրակի, 24 Սեպտեմբեր, ժամը 9էն մինչ 12 զալ Ազգային Խորհրդարան, Հոգաբարձութեանս սօմարին մէջ արձանագրել տալու իրենց զուակաց անունները: Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգային Երկսեռ վարժարանաց Վ. Ատենազարի Ատենապետ Գ. Կիւլպիսիւնեան Յ. Մ. Թովմասեան վառնա, 22 Սեպտեմբեր

ԹԱՏՈՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

«Վէսէլլօ» հայ գերասանական խմբին կողմանէ պիտի ներկայացուի այս գիշեր ժամը 9ին, «Յոփութեան վախճանը» ծիծաղաշարժ կատակերգութիւն 4 արար:

Վաղը, կիրակի գիշեր պիտի ներկայացնեն «Գերեզմանի սիրահարները» խիստ ծիծաղաշարժ կատակերգութիւն 3 արար:

Այս գիշեր Պ. Ճիվանի խմբին կողմանէ պիտի ներկայացուի «Օլէմբիա» եղբորգութիւն 3 արար:

Վաղը, կիրակի գիշեր պիտի ներկայացնեն «Չրպարտեալ յիմարը» եղբորգութիւն 3 արար:

Երգ և պար Տիկին Լիլայի և Օր. Գաթիւնայի կողմանէ:

Վարդապետ Օր. Գաթիւնայի կողմանէ:

Գիւնեթը ԱթԱն